18 փետրվարի 2010 թվականի N 142 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 12-Ի N 1294-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը

ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի նոյեմբերի 12-ի «Ներդրումային ծրագրի շրջանակներում «Արաքս թռչնաֆաբրիկա» փակ բաժնետիրական ընկերության կողմից 300 մլն դրամը գերազանցող ապրանքների ներմուծման դեպքում մաքսային մարմինների կողմից հաշվարկված ավելացված արժեքի հարկի գումարների վճարման ժամկետը երեք տարի ժամկետով հետաձգելու մասին» N 1294-Ա որոշման N 1 հավելվածում կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունը՝

1) աղյուսակը 3-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 4, 5, 6, 7, 8, 9, 10, 11, 12, 13, 14, 15, 16, 17 և 18-րդ կետերով.

NN ը/կ	ԱՏԳ ԱԱ ծածկա-գիրը	Անվանումը և մոդելը	Ծագման երկիրը	Արտահան-ման երկիրը	Քա-նակը (հատ)	Արժեքը (դրամ)	Ներմուծման ժամկետը	
							տարի	կիսամյակ
1	2	3	4	5	6	7	8	9
4.	843629000	Մայրական հավերի աճեցման սարքավորում, «Repromatic»	Գերմանիա	Գերմանիա	4	270000000	2010 թ.	1-2
5.	843629000	Բրոյլերի մայրական հավերի աճեցման սարքավորում, «Repromatic»	Գերմանիա	Գերմանիա	4	330000000	2010 թ.	1-2
6.	8436	Խոզանոցի պահպանման սարքավորում, «Big Dutchman»	Գերմանիա	Գերմանիա	5	570000000	2010 թ.	1-2
	Կիսաֆաբրիկատների սարքավորում, «SCHALLER», այդ թվում՝							
7.	8438	Վակուումային շպրից	Ավստրիա	Ավստրիա	1	204000000	2010 թ.	1-2
8.	8419	Եփման կաթսա			1			
9.	8438	Մսաղաց			1			
10.	8418	Սառույց արտադրող մեքենա			1			
11.	8438	Մերսիչ (մասաժոր)			1			
12.	8438	Խառնիչ			1			
13.	8438	Վակուումային կուտեր			1			

1	2	3	4	5	6	7	8	9
14.	8716	Սայլակ			10			
15.	8419	Ջերմախցիկ			1			
16.	8716	Սայլակ՝ ապխտման համար			4			
17.	4421	Ձող՝ ապխտման համար			1000			
18.	8438	Ժապավենաձև սղոց			1			

2) աղյուսակի «Ընդամենը» տողում «874264740» թիվը փոխարինել «2248264740» թվով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Տ. ՍԱՐԳՍՅԱՆ

2010 թ. փետրվարի
Երևան